

40) Մատենադարան «Անահիտ»-ի 1. Անարոյ Ֆրանս. Եպիկուրի պարտեզը (հատուածներ), Թարգմանեց Ա. Զ. Ֆարիզ, 1901 թ. Գինը 1 ֆրանկ:

Պարիզում հրատարակուող «Անահիտ» ամսեայ հանդէսը իր բաժանորդներին նրանց, որոնք երրորդ տարուան բաժանորդագինը վճարած են, ձրիաբար ուղարկում է յիշած գիրքը, ինչպէս և Ալֆրէդ Դը Վինէի «Քերթուածները», որ շուտով լոյս կը տեսնի: Անկասկած, կարելի է ողջունել՝ ֆրանսիական գրականութիւնից ընտիր երկասիրութիւնների հայերէն թարգմանութեան միտքը, սակայն, մեզ թւում է, որ այդ սերիաներին պէտք էր կցել, իբրև առաջաբան, մի տեսութիւն ֆրանսիական արդի գրական հոսանքների մասին. այն ժամանակ աւելի կըրթիչ ազդեցութիւն կ'ունենային այդ հրատարակութիւնները և իրարից անջատ, անկապ, պատահական հատուածների ընտելութիւն չէին կրի:

Անատոլ Ֆրանսի «Եպիկուրի պարտեզ»ի մէջ հատուածները այնպիսի տպաւորութիւն են թողնում, որ կարծես դուք յանկարծ մտել էք ֆրանսիական մի բարձր սալօն, ուր խօսում են զանազան փիլիսոփայական, հասարակական և գիտական հարցերի մասին սալօնական նրբաճաշակութեամբ և թեթեւութեամբ. դուք չը գիտէք խօսակցութեան սկիզբը, շատ բան միայն հարկանցի ակնարկով է շօշափուած. զգում էք որ խօսողը աշխատում է որքան կարելի է գեղեցիկ ձևերի մէջ ամփոփել իր թըռուցիկ մտքերը... Այդ սալօնական խօսակցութիւններից հազիւ թէ շատ բան ուսանի հայ ընթերցողը. նրան հարկաւոր են այժմ ոչ գրական քաղցրեղէններ, չ բիսկվիտներ, այլ աւելի սննդաբար և պարզ մտաւոր կերակուր: Ֆրանսիական գրականութեան մէջ պէտք է ընտրել և թարգմանել աւելի հիմնական, տեղական գին ունեցող երկեր:

Գալով թարգմանական լեզուին, պէտք է խոստովանել որ նա գողտրիկ է և կարողացել է արեմտեան հայերէնով արտայայտել հեղինակի նուրբ, թեթև և գեղեցիկ ոճը:

Լ. Ս.

41) Н. В. КРЕНИЦЫНЪ, „Восточный вопросъ на почвѣ его исторіи и политикѣ“, С. Петербургъ, 1900, 118 стр. цѣна 1 руб.—н. Գ. Կրենիցին. «Արեւելեան հարցը իր պատմութեան և քաղաքականութեան տեսակէտից», Պետերբուրգ, 1900 թ. 118 էր. գինը 1 ռ.:

Մարդկային կեանքը գոյութեան կռուի մի անվերջ շղթայ